

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՈՐՊԵՍ ՄԱՏՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐ

2015 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հանրապետության հանրաքվեի միջոցով բովանդակային և ծավալային առումով նշանակալից փոփոխություններ կատարվեցին ՀՀ Սահմանադրության մեջ: Երկիրը կառավարման խառը՝ կիսանախագահական ձևից անցում կատարեց խորհրդարանական կառավարման, ինչը ենթադրում է պետական իշխանության բարձրագույն մարմինների լիազորությունների ու փոխհարաբերությունների միանգամայն նոր համակարգ: Նախագահի կարգավիճակի հարցը բավական տարողունակ է: Ուստի, սույն հետազոտության շրջանակում կանդրադառնաք սահմանադրական բարեփոխումներում արտացոլված ՀՀ նախագահի՝ որպես Սահմանադրության երաշխավորի իրավական հիմքերին:

ՀՀ նախագահի կարգավիճակը նորովի ամրագրված է 2015 թ. դեկտեմբերի 6-ին հանրաքվեով ընդունված Սահմանադրության փոփոխություններով (այսուհետ՝ Սահմանադրության փոփոխություններ կամ փոփոխված Սահմանադրություն) 123-րդ հոդվածում: Ըստ նշված հոդվածի՝ հանրապետության նախագահը պետության գլուխն է, հետևում է Սահմանադրության պահպանմանը, իր լիազորություններն իրականացնելիս անաչառ է և առաջնորդվում է բացառապես համապետական ու համազգային շահերով, իր գործառույթներն իրականացնում է Սահմանադրությամբ սահմանված լիազորությունների միջոցով: Մեջբերված հոդվածի վերլուծության արդյունքում կարելի է առանձնացնել ՀՀ

նախագահի հետևյալ հիմնական գործառույթները՝ ա) պետության գլխի գործառույթ և բ) Սահմանադրության երաշխավորի գործառույթ: Այս երկու գործառույթները սերտորեն փոխկապակցված են և հանդիսանում են նախագահի կարգավիճակի միասնական սահմանադրաիրավական հիմքը: ՀՀ նախագահի կարգավիճակի այդպիսի սահմանումը համապատասխանում է խորհրդարանական կառավարման ձևի պետություններում նախագահի ինստիտուտին վերապահվող սահմանադրաիրավական դերին և նշանակությանը¹: Նման ձևակերպումները նման են եվրոպական մի շարք երկրների սահմանադրությունների ձևակերպումներին:

Օրինակ՝ Հունաստանի Սահմանադրության 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նախագահը սահմանադրական կարգի կարգավորիչն է: Քանի որ սահմանադրական կարգն այնպիսի համակարգ է, որի պայմաններում պետության կողմից սպառնվում է մարդու և քաղաքացու իրավունքների պահպանումը, և, համապատասխանաբար, պետությունը գործում է Սահմանադրությանը համապատասխան, նախագահը Հունաստանում փաստորեն հանդիսանում է սահմանադրական կառուցակարգերի և պետության սահմանադրական գործունեության կարգավորիչն ու երաշխավորը, ինչը նշանակում է, որ առնվազն արարողակարգային իմաստով նա հանդիսանում է Սահմանադրության երաշխավորն ու պետության գլուխը: Իտալիայի Սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Իտալիայի նախագահը պե-



տության գլուխն է և ներկայացնում է ազգային միասնությունը: Այս ձևակերպումը ևս, ըստ էության, խոսում է այն մասին, որ նախագահը հանդիսանում է սահմանադրական կարգի, և որ նույնն է՝ Սահմանադրության երաշխավորը: Պրոֆեսոր Վ. Չիրկինի կարծիքով, պետության գլուխն իրականացնում է սահմանադրական կարգի պաշտպանի կամ երաշխավորի գործառույթ, որը նշանակում է նաև Սահմանադրության պաշտպանության գործառույթի իրականացում¹: Իսկ գերմանացի իրավագետներ Իգենգենն և Կիրխոֆը գտնում են, որ խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող Գերմանիայում նախագահն առնվազն արարողակարգային մակարդակում հանդիսանում է թիվ մեկ պետական պաշտոնյան, որը վերահսկողություն է իրականացում սահմանադրական համակարգի լեգիտիմության նկատմամբ և մասնակցում է քաղաքական համակարգի ձևավորմանն ու գործունեությանը²:

Անդրադառնալով ՀՀ նախագահի կարգավիճակի՝ Սահմանադրության երաշխավորի բաղադրիչին, կարելի է փաստել, որ նախագահն այն իրացնում է Սահմանադրության պահպանմանը հետևելով, ինչն ուղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրության փոփոխությունների վերոնշյալ հոդվածում: Սահմանադրության փոփոխությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնելու ՀՀ նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի իրականացման երկու հիմնական դրսևորում՝ օրենքների և պետական իշխանության մարմինների ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողություն, որն իրականացվում է նախագահի կողմից նշված նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանության որոշման նպատակով Սահմանադրական դատարան դիմելու միջոցով և պետական իշխանության մարմինների համակարգի

և լայն առումով՝ քաղաքական և պետական կարգի սահմանադրական գործունեությանը նպաստելուն և աջակցելուն նպատակաուղղված լիազորություններ³: Օրենքների և այլ իրավական ակտերի՝ ՀՀ ազգային ժողովի որոշումների, կառավարության և վարչապետի որոշումների և այլ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության որոշման հարցում նախագահի ակտիվ դերակատարումը շատ կարևոր է սահմանադրական կարգի գործուն պահպանությունն ու պաշտպանությունն ապահովելու տեսակետից. դրա շնորհիվ մեծանում է երկրի իրավական համակարգը հակասահմանադրական նորմերից հնարավորինս զերծ պահելու հավանականությունը⁴: Սակայն նախագահն ամենևին չի փոխարինում սահմանադրական արդարադատության մարմին՝ Սահմանադրական դատարանին: Լինելով արտադատական մարմին՝ Նախագահը չի կարող վերջնական որոշում կայացնել սահմանադրականության խնդիրների վերաբերյալ: Փոխարենը նրա պարտականությունն է այդ խնդիրների վրա ժամանակին հրավիրել Սահմանադրական դատարանի ուշադրությունը: Սահմանադրականության պահպանման գործում նախագահը փաստորեն կատարում է կանխարգելիչ գործառույթ⁵: Ինչ վերաբերում է քաղաքական-պետական կարգի սահմանադրական գործունեությանը նպաստող լիազորություններին, սակայն նախագահը դրանց գործադրման միջոցով հանդես է գալիս սահմանադրական նորմերի պաշտպանի դերում:

Մեր համոզմամբ, Սահմանադրության պահպանմանը հետևելու նախագահի գործառույթը կառավարման բոլոր ձևերում և հատկապես՝ խորհրդարանական համակարգում չի հանգում միայն Սահմանադրության նորմերի ձևական պահպանմանը և, հետևաբար, պետական իշխանության մարմինների՝ դրանցից բխող լիազորությունների իրացմանը հետևելուն: Սահմանադրության պահպանումը ենթադրում է նաև քաղաքա-



կան, սովորութային, ազգային, բարոյահոգեբանական և բազմաթիվ այլ գործոնների առկայություն և համադրում, որոնք միտված են Սահմանադրության հիմնարար սկզբունքների իրագործմանը, Սահմանադրության «ոգու» պահպանմանը: Բնականաբար, այդպիսի սկզբունքներ և պետական քաղաքականության հիմնարարություններ են պարունակվում նաև ՀՀ Սահմանադրության փոփոխություններում⁶: Ուստի, նախ ակնկալվում է սահմանադրականության կանոններով պետական իշխանության մարմինների համակարգի անխափան գործունեություն, որը հիմնված է ոչ միայն քաղաքական, այլև լայն իմաստով պետական և ազգային շահի գիտակցված իրացման հիմնարարականի վրա: Նման սահմանադրական իրողության պարագայում կապահովվի սահմանադրական կարգի լիարժեք գործողությունը, որն ի վերջո հիմնված է հասարակության բնականոն զարգացման և հասարակության անդամների բարեկեցության ընդհանուր տեսլականի վրա:

ՀՀ նախագահը հիշյալ նկատառումով պետք է ունենա համարժեք կարգավիճակ՝ վերը նշված գործառնությունների արդյունավետ իրականացման համար: Փաստացի նախագահը կոչված է նպաստելու և աջակցելու սահմանադրական պետական համակարգի հանրօգուտ և անխափան գործունեությանը, որը հենց երաշխիք է ստեղծում մարդկանց և քաղաքացիների բարեկեցության համար: ՀՀ Սահմանադրության փոփոխություններով հանրապետության նախագահի՝ որպես Սահմանադրության պահպանման երաշխավորի և, համապատասխանաբար, պետական իշխանության մարմինների իրավահարաբերություններում «արբիտրի» լիազորությունները՝ ուղղված նշված խնդիրների լուծմանը, հանդիսանում են ՀՀ սահմանադրական կարգի պաշտպանության կարևոր երաշխիք: Այդպիսի լիազորություններ են հանդիսանում պետական իշխանության բարձրագույն մարմինների սահ-

մանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերով Սահմանադրական դատարան դիմելը, պետական իշխանության մարմինների ձևավորմանը և պաշտոնատար անձանց նշանակմանը մասնակցելը, դատապարտյալներին ներում շնորհելը և այլն: Հանրապետության նախագահի այս լիազորությունները հավասարակշռող ազդեցություն ունեն՝ ըստ սահմանման քաղաքական բնույթ ունեցող օրենսդիր և գործադիր իշխանությունների փոխհարաբերությունների վրա, նպաստում են խորհրդարանի և կառավարության ներդաշնակ գործունեությանը և համակեցությանը՝ կանխելով կամ կանխարգելելով իշխանության ճյուղերի և լայն առումով՝ քաղաքական ուժերի միջև տարաձայնությունների կամ առճակատումների դեպքերում սահմանադրական կարգի խաթարումը: Այդպիսի բախումային իրավիճակներում նախագահը փաստորեն նման է «պահեստային ուժի», որը հիմնական քաղաքական-պետական դերակատարների՝ Ազգային ժողովի և (կամ) կառավարության անգործության դեպքում գործադրում է իր «քաղաքական ներուժը» և դրան համապատասխան «ճգնաժամային» լիազորությունների զինանոցը՝ հանդես գալով սահմանադրական կարգի պաշտպանի դերում: Այդպիսով, նախագահը հնարավորություն է ունենում նպաստելու սահմանադրական մարմինների բնականոն գործունեությանը և հակակշիռների ու զսպումների համակարգի արդյունավետ իրացմանը, ներագդել ընդհանուր վերցրած պետության կադրային քաղաքականության վրա, նպաստել արդարադատության խնդիրների լուծմանը և այլն:

Այդուհանդերձ հարկ է նշել, որ Սահմանադրության փոփոխություններով ՀՀ նախագահի մասնակցությունը պետական իշխանության մարմինների և հատկապես կառավարության ձևավորմանը, կրում է սահմանափակ և առավելապես արարողակարգային բնույթ, ինչը, կարծում ենք, բավարար երաշխիքներ չի



ստեղծում այս հարցում Ազգային ժողովի և մասնավորապես խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքը հակակշռելու ու որպես սահմանադրակարգի պաշտպան և «արբիտր»՝ պետական իշխանության մարմինների համակարգի՝ սահմանադրական վարքագծին աջակցելու համար: Այսպես, համաձայն փոփոխված Մահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին մասի՝ նախագահն անհապաղ վարչապետ է նշանակում խորհրդարանական մեծամասնության կողմից առաջադրված անձին, իսկ եթե վարչապետ չի ընտրվում, նախագահն արդեն անհապաղ վարչապետ է նշանակում նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված կարգով Ազգային ժողովի կողմից ընտրված անձին: Փաստորեն կառավարության ղեկավարի նշանակման հարցում նախագահը հնարավորություն չունի իրացնել պետության գլխի և Մահմանադրության պահապանի իր կարգավիճակից բխող այն նվազագույն նախաձեռնողականությունը, որը բնորոշ է խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում պետության գլխին, քանզի փոփոխված Մահմանադրության 149-րդ հոդվածով նախագահին ո՛չ հնարավորություն է տրված Ազգային ժողովի քննարկմանն ու հաստատմանն առաջադրել վարչապետի թեկնածուին և ոչ էլ բավարար ժամկետ է թողնված՝ քննարկելու և որոշում կայացնելու խորհրդարանի կողմից ընտրված թեկնածուի վերաբերյալ: Այդպիսով բացառվում է նախագահի առարկայական դերը գործադիր իշխանության ղեկավարի նշանակման գործում: Ավելին՝ փոփոխված Մահմանադրության 149-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ խորհրդարանը ոչ թե ընտրում է վարչապետի թեկնածուին, որը հետագայում կարող է հաստատվել կամ չհաստատվել նախագահի կողմից, այլ հենց ինքն էլ ընտրում է վարչապետին, իսկ Նախագահը միայն կրկնաստորագրում է խորհրդարանի որոշումը՝ առանց դրան հակադրվելու կամ այն մերժելու իրավունքի: Հարկ է

նշել, որ այս հարցի շուրջ խորհրդարանական հանրապետությունների սահմանադրաիրավական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախագահն այլ երկրներում բավականին ակտիվ դերակատարում ունի վարչապետի նշանակման գործում: Մասնավորապես, այնպիսի խորհրդարանական հանրապետություններում, ինչպիսիք են՝ Գերմանիան, Իտալիան, Լատվիան, Հունգարիան, Չեխիան և այլ երկրներ, Նախագահը կամ առաջադրում է վարչապետի թեկնածուին (կամ նշանակում է վարչապետին, որը հետագայում կառավարության ողջ կազմի հետ պետք է ստանա խորհրդարանի վստահությունը), կամ ունի ողջամիտ ժամկետում խորհրդարանի ներկայացրած թեկնածուին հաստատելու կամ մերժելու իրավունք (կամ ուղղակիորեն որևէ կոնկրետ ժամկետ չի սահմանվում և՛ կամ այդ ժամկետը բավական երկար է), կամ էլ նախագահի և խորհրդարանի նախաձեռնողականության տարրերը համադրված են, եթե նախագահի կողմից ներկայացված վարչապետի թեկնածուն խորհրդարանի կողմից չի հաստատվում, ապա նախագահին թեկնածու է առաջադրում խորհրդարանը⁷:

Կառավարության անդամների նշանակման հարցում ևս Հանրապետության նախագահը չունի հայեցողության ողջամիտ շրջանակ: Ըստ փոփոխված Մահմանադրության 150-րդ հոդվածի 1-ին մասի՝ նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում է փոխվարչապետներին և նախարարներին: Նախագահը չունի անհրաժեշտ սահմանադրաիրավական լծակ քաղաքական, արդյունավետ կառավարման կամ որևէ այլ պատճառով չհամաձայնելու վարչապետի կողմից ներկայացված թեկնածուների նշանակման հետ, քանզի որ համաձայն վերոնշյալ հոդվածի՝ Նախագահը կարող է հակադրվել վարչապետին, միայն եթե հիմքեր ունի, որ կառավարության անդամները և (կամ) դրանց նշանակման գործընթացը չեն համապատասխանում



Սահմանադրության պահանջներին: Ընդ որում, եթե Նախագահը քաղաքական կամ այլ պատճառներով չի կատարում 150-րդ հոդվածի պահանջները և սահմանված 3-օրյա ժամկետում չի նշանակում կառավարության անդամներին, ապա նրանք համարվում են նշանակված իրավունքի ուժով: Փաստորեն այս դեպքում ևս նախագահը որոշում ընդունելու հարցում ժամկետային առումով խստորեն սահմանափակված է, ինչը բնականաբար ազդում է կառավարության ձևավորման պրոցեսում նրա գործունակության վրա: Ստացվում է, որ փոփոխված Սահմանադրությամբ նախատեսված խիստ կարճ ժամկետը լրանալուց հետո ՀՀ նախագահը գրկվում է նախարարների՝ որպես գործադիր իշխանության ոլորտային հիմնական պատասխանատուների նշանակման գործում որևէ մասնակցությունից և, հետևաբար, վարչապետին և խորհրդարանին աջակցելու հնարավորությունից: Ինչպես և վարչապետի ընտրության պարագայում, նախարարների և փոխվարչապետների ընտրության գործընթացում Նախագահի դերի և լիազորությունների վերաբերյալ մեր մտահոգությունները նույնն են: ՀՀ նախագահը պետության գլուխն է, Սահմանադրության պահպանմանը հետևող բարձրագույն պաշտոնատար անձ և իրավարար, հետևաբար պետք է ունենա թեկուզ սահմանափակ, բայց որոշակի իրավաքաղաքական հետևանքներ ունեցող մասնակցություն թե՛ վարչապետի և թե՛ կառավարության մյուս անդամների նշանակման գործում:

Գործադիր իշխանության ձևավորումն ու գործունեությունը համակողմանիորեն կշռադատված և տարարնույթ շահերի հավասարակշռմամբ կայացված քաղաքական որոշման հիման վրա շատ կարևոր է պետական իշխանության համակարգի գործունեության համար, և դրա համար իշխանության այս ճյուղի բարձրագույն մարմնի՝ կառավարության ձևավորմանը պետք է մասնակցեն (վարչա-

պետի նշանակումից հետո) նախագահը, վարչապետը և խորհրդարանը: Միջազգային սահմանադրական փորձի ուսումնասիրման արդյունքները ևս խոսում են այն մասին, որ խորհրդարանական կառավարմամբ այլ պետություններում նախագահը վարչապետի և խորհրդարանի հետ մեկտեղ, իր կարգավիճակից բխող սահմանափակումներով հանդերձ, մասնակցում է կառավարության անդամներին նշանակելու հարցում և հնարավորություն ունի չհաստատել վարչապետի ներկայացրած թեկնածությունը կամ թեկնածություններին և հակադրվել վարչապետին, իսկ խորհրդարանն այս կամ այն կերպ հաստատում է կառավարության կազմը՝ կամ ուղղակիորեն, կամ կառավարության ծրագրին հավանություն տալու միջոցով⁸:

Փոփոխված Սահմանադրության 138-րդ հոդվածով նախատեսված է հանրապետության նախագահի լիազորությունը նշանակել ժամանակավոր պաշտոնակատարներ, երբ Ազգային ժողովն օրյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներով նշանակումներ չի կատարում փոփոխված Սահմանադրությամբ նախատեսված պետական պաշտոններում: Խոսքը գնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և անդամների, գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի նախագահի և անդամների, Բարձրագույն դատական խորհրդի անդամների մասին: Մեր կարծիքով, նախագահի այս լիազորության ամրագրումը ՀՀ Սահմանադրության փոփոխություններում շատ կարևոր է և ողջունելի, սակայն այն կարող էր առավել ընդգրկուն լինել և ներառել նախագահի իրավունքն Ազգային ժողովին առաջադրելու համապատասխան թեկնածուներին կամ հաստատել Ազգային ժողովի ներկայացրած թեկնածուներին: Այդպիսով նախագահի՝



սահմանադրական կարգի երաշխավորի գործառույթը կդառնար առավել գործուն, քանի որ նա լիարժեք ներգրավված կլիներ պետական համակարգի առանցքային օղակների ձևավորման գործին և կհավասարակշռեր Ազգային ժողովի լիազորությունները: Դա գործընթացը կդարձներ առավել ճկուն և կսահմանափակեր ճգնաժամային իրավիճակների առաջացման հնարավորությունը: Նշենք, որ խորհրդարանական շատ հանրապետություններում նախագահի լիազորություններն առավել ընդարձակ են պետական պաշտոնների նշանակման հարցերում⁹:

Հանրապետության նախագահի կարգավիճակի և լիազորությունների առնչությամբ ՀՀ Սահմանադրության փոփոխություններում առկա նշյալ խնդիրների բարձրացումը, անշուշտ, չեն բացառում Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի կողմից նման իրավակարգավորման սահմանման ռացիոնալ հիմնավորումների առկայությունը: Ըստ էության, Սահմանադրության փոփոխություններով փորձ է արվել հնարավորին չափով սահմանափակել նախագահի հնարավորությունը սուբյեկտիվ կամարտահայտմամբ միջամտել իշխանության ճյուղերի գործունեությանը և փոխգործակցությանը՝ ստեղծելով համապատասխան ինստիտուցիոնալ հիմքեր, որպեսզի նախագահն իրականացնի լոկ անկողմնակալ իրավարարի գործառույթ: Հաշվի առնելով, որ Հայաստանն անկախությունից ի վեր եղել է ուժեղ նախագահի ինստիտուտով կիսանախագահական հանրապետություն՝ մեծ է ռիսկը, որ նախագահը երկրում ձևավորված նախագահակենտրոն քաղաքական ավանդույթի ուժով կփորձի դուրս գալ Սահմանադրության երաշխավորի և արբիտրի գործառույթների շրջանակից և ֆորմալ ու ոչ ֆորմալ ներագրեցություն ունենալ հատկապես գործադիր իշխանության ձևավորման և գործունեության վրա՝ այդպիսով անցնելով իր լիազորությունների

շրջանակը և խախտելով խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում Նախագահի կարգավիճակի տրամաբանությունը:

ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում որպես Հայաստանի պետաիշխանական համակարգի հիմնական համակարգային թերություններ նշվել են իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի ոչ հետևողական իրացումը, գործառույթ-ինստիտուտ-լիազորություն շղթայի աններդաշնակությունը, իշխանության մարմինների գործառութային, հակակշռող և զսպող լիազորությունների անհաշվեկշռվածությունը, իշխանության տարբեր ճյուղերի ոչ պատշաճ գործունակությունը և ոչ բավարար գործառութային անկախությունը, պետական իշխանության մարմինների հանրային-իրավական պատասխանատվության անհատկությունը և որպես հետևանք՝ պետական իշխանության մարմինների համակարգում ստվերային հարաբերությունների և սուբյեկտիվիզմի դրսևորումները (էջ 8-9): Այս համատեքստում Հայեցակարգում ընդգծվում է նախագահի կարգավիճակի վերանայման անհրաժեշտությունը: Հայեցակարգում հստակ արձանագրվում է, որ հանրապետության նախագահի գործառութների ու լիազորությունների միջև ապահովված չէ անհրաժեշտ համամասնակալություն: Մասնավորապես, բավարար չափով հստակեցված չեն Նախագահի լիազորությունները գործադիր իշխանության իրականացման և Սահմանադրության պահպանման գործառութների իրականացման բնագավառներում: Ի մասնավորի՝ առկա է գործադիր իշխանության երկվություն՝ պայմանավորված նախագահի և կառավարության գործառութային լիազորություններով (էջ 28): Փաստելով գործադիր իշխանության ոլորտում նախագահի ընդարձակ լիազորությունների առկայությունը՝ Հայեցակարգում մտահոգություն է հայտնվում առ այն, որ խորհրդարանում նախագա-



հին սատարող բացարձակ մեծամասնության առկայության և ներխուժողական հակակշիռների բացակայության պայմաններում նախագահական իշխանությունը ստանում է բացարձակ բնույթ, և, հետևաբար, մեծամուծ է նախագահի քաղաքական մենիշխանության վտանգը: Այս իրողության հիմնական պատճառներից է օրենսդիր և գործադիր իշխանության կողմից գործուն հակակշիռների բացակայությունը (էջ 28):

Համաձայնելով ՀՀ Սահմանադրության փոփոխությունների հեղինակների այս մտահոգությանը՝ այդուհանդերձ կարևոր է սահմանել այնպիսի նորմատիվ և համակարգային երաշխիքներ, որպեսզի չստեղծվի հակառակ իրավիճակը. նախագահը չվերածվի բացառապես արարողակարգային բնույթ ունեցող պետական ինստիտուտի: Համապատասխան նորմատիվ կարգավորումների միջոցով անհրաժեշտ է հավասարակշռել Ազգային ժողովի և կառավարության գործառնության անկախությունը մի կողմից և նախագահի հավասարակշռող ու սահմանադրական կառուցակարգերի բնականոն գործունեությունը խթանող դերը՝ մյուս կողմից: Մասնավորապես, Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքով կարելի է սահմանել վարչապետի պարտականությունն Ազգային ժողովին կառավարության ծրագիրը ներկայացնելիս առանձնահատուկ անդրադառնալ իր կողմից առաջադրված կառավարության անդամների՝ փոխվարչապետերի և նախարարների այն թեկնածուներին, որոնց նախագահը հրաժարվել է նշանակել կամ այլ պատճառով Նախագծով սահմանված 3-օրյա ժամկետում չի նշանակել, և նրանք նշանակված են համարվել իրավունքի ուժով և ներկայացնել այդ անձանց՝ նախարարի կամ փոխվարչապետի թեկնածու առաջադրելու հիմնավորումները: Այդպիսով կուրվագծվի ՀՀ վարչապետի հանրային-քաղաքական պատասխանատվությունը կառավարության ձևավորման գործընթացում իր կող-

մից որդեգրված կադրային քաղաքականության համար: Դրանով հավելյալ կշիռ և ազդեցություն կհաղորդվի նախագահի կողմից համապատասխան նախարարին կամ փոխվարչապետին պաշտոնի չնշանակելու ակտին, որով Նախագահը հնարավորություն է ստանում իր քաղաքական դիրքորոշումն արտահայտել վարչապետի կադրային մոտեցումների և ապագա կառավարության նկատմամբ, ինչը նշված օրենսդրական կարգավորման առկայությամբ կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ ինչպես վարչապետի և կառավարության, այնպես էլ խորհրդարանում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժի հանրային վարկանիշի և գործունակության վրա: Այն կարող է մասնախաղրյալ հանդիսանալ Ազգային ժողովի կողմից կառավարության ծրագիրը չհաստատելու, վարչապետին անվստահություն հայտնելու, կառավարությանը վստահություն չհայտնելու կամ համապատասխան նախարարի կամ փոխվարչապետի պաշտոնավարման նպատակահարմարության հարցը վարչապետի առջև բարձրացնելու համար: Փաստորեն լրացուցիչ երաշխիքների ներդրման պարագայում ՀՀ նախագահի կողմից կառավարության անդամների թեկնածուների չհաստատումը կարող է լուրջ հակակշիռ դառնալ Ազգային ժողովի (մասնավորապես՝ ի դեմս խորհրդարանի քաղաքական մեծամասնության) և վարչապետի նկատմամբ: Նախագահի անձնական հատկանիշներն ու վարկանիշը, ինչպես նաև փաստացի գործողությունները ևս կարող են հավելյալ կշիռ հաղորդել նախագահի նշված լիազորությանը: Մասնավորապես, նախագահը նախարարների կամ փոխվարչապետերի թեկնածուներին հետ իր անհամաձայնության մասին կարող է հայտարարել հրապարակայնորեն՝ զանգվածային լրատվության միջոցներով կամ այլ եղանակով՝ դրանով իսկ ճնշում գործադրելով համապատասխան թեկնածուներին առաջադրած վարչապետի և անուղակիորեն նաև խորհրդարա-



նական մեծամասնության վրա:

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 148-րդ հոդվածի տարածական մեկնաբանման դեպքում կարելի է նաև ընթացիկ օրենսդրությամբ սահմանել յուրաքանչյուր նախարարության գործառույթներով պայմանավորված՝ համապատասխան նախարարի կրթական և մասնագիտական պատրաստվածության լրացուցիչ պահանջ-չափանիշներ: Նման պահանջներ կարելի է սահմանել նաև փոխվարչապետերի համար: Այդպիսի իրավակարգավորման պարագայում վարչապետը հնարավորություն չի ունենա դրսևորելու քաղաքական-կուսակցական կամ անձնական սուբյեկտիվություն ու նախարարի կամ փոխվարչապետի պաշտոնում նախագահին առաջարկել մասնագիտական կամ քաղաքական առումով «անպատրաստ» անձի: Դա թույլ կտա որոշ չափով հավասարակշռելու կառավարության ձևավորման հարցում նախագահի և վարչապետի՝ առաջին հայացքից անհամաչափ լիազորությունները:

Խորհրդարանական համակարգի շրջանակում ՀՀ նախագահի և պետական իշխանության ճյուղերի կառուցակարգային կայացման համար չափազանց կարևոր է Հայաստանի քաղաքական մշակույթի զարգացումը: Մասնավորապես, պետք է զարգանա ՀՀ կուսակցական համակարգը, կուսակցությունները պետք է լինեն պատասխանատու և հանրության առջև հաշվետու քաղաքական կառույցներ: Որպես հետևանք Ազգային ժողովում քաղաքական մեծամասնություն ստացած կուսակցությունը կամ դաշինքն առավել մեծ պատասխանատվությամբ կմոտենա վարչապետի թեկնածուի առաջադրմանը, իսկ վերջինս՝ որպես իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչ, կձգտի իբրև կառավարության անդամների թեկնածուներ ներկայացնել մասնագիտական և քաղաքական անհրաժեշտ որակներ և դրական հանրային ընկալում ունեցող անձանց: Քաղաքական-կուսակ-

ցական համակարգի կայացումը չի կարող տեղի ունենալ առանց ընտրողների իրավագիտակցության բարձրացման, որոնք պետք է ունակ լինեն համարժեք գնահատելու իշխող քաղաքական ուժի քաղաքականությունը կադրային և մյուս հարցերում՝ համապատասխանաբար կրկին անգամ վստահելով կամ վստահությունից զրկելով այդ քաղաքական միավորին ընտրությունների ժամանակ: Քաղաքացիների և կուսակցությունների միջև նման կապի առկայությունը մեծապես նպաստում է ամբողջ քաղաքական համակարգի անխափան գործունեությանը: Ընդհանրապես իրավագիտակցության և սահմանադրական մշակույթի զարգացումն է, որ կհանգեցնի պետական ինստիտուտների սահմանադրական կարգավիճակի, դերի և նշանակության լիարժեք դրսևորմանը, իրացմանը, կրացառի կամ կսահմանափակի պետական իշխանության բարձրագույն մարմինների միջև սովորային և ոչ ֆորմալ հարաբերությունների ձևավորումը:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Սահմանադրության փոփոխություններով ՀՀ նախագահի կարգավիճակի և լիազորությունների միանգամայն նոր համակարգի ներդրմամբ կառուցակարգային հիմքեր են ստեղծվում նախագահի իրավական կարգավիճակի և լիազորությունների հստակեցման և երկրի սահմանադրական համակարգում առկա մենիշխանության ռիսկերը սահմանափակելու համար: Փոփոխված Սահմանադրությամբ նախագահի իրավական կարգավիճակը սահմանելիս շեշտը դրվում է հենց Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի վրա, և համապատասխան երաշխիքներ են սահմանվում նախագահի կողմից իր այս գործառույթը պատշաճորեն իրականացնելու համար: Միաժամանակ վերոգրյալի լույսի ներքո կարևոր է արձանագրել, որ Սահմանադրության փոփոխություններով նախատեսվում է ավելի թույլ նախագահի ինստիտուտ, քան շատ խորհրդարան-

նական հանրապետությունների Սահմանադրություններ, այդ թվում Նախագահի՝ Սահմանադրության երաշխավորի գործառույթի համատեքստում: Ընդ որում, նման գնահատական տեղ է գտել նաև ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի երկրորդ նախնական կարծիքում¹⁰:

Այդուհանդերձ, չնայած շատ դեպքերում իր խորհրդանշական կարգավիճակին և սահմանափակ լիազորություններին: ՀՀ նախագահը խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում չի լինելու «դեկորատիվ ֆիգուր»: Ցանկացած պետություն պետք է ունենա այնպիսի ինստիտուտ, որը հետևի սահմանադրական կարգի պահպանմանը, խորհրդանշի ինքնիշխան պետականությունն ու ազգի միասնությունը, հաշտարարի դեր կատարի պետական իշխանության տարբեր մարմինների միջև վեճերի և բախումների ժամանակ՝ թույլ չտալով դրանց արտասահմանադրական լուծումներ: Դճնաժամային իրավիճակներում հենց այդպիսի ներդաշնակեցնող և վերկուսակցական ինստիտուտն է կոչված թույլ չտալ սահմանադրական կարգի խաթարում և սահմանադրական իրավահարաբերությունների ձևախեղում: Նման ինստիտուտի դերում ՀՀ-ում հանդես է գալու հենց Նախագահը:

Ինչպես իրավացիորեն նշում են սահմանադրագետներ Իզենզեեն և Կիրիոֆը՝ խորհրդարանական հանրապետություններում Նախագահի մոտ քաղաքական

նշանակալից իշխանության բացակայությունն ինչ-որ առումով նրա ուժի հիմքն է, որը դրսևորվում է հասարակության քաղաքականության վրա հոգևոր ներգործությամբ: **Նախագահը միավորում է այն, ինչ միավորում է բոլորին: Այդպիսով՝ նա կարծես մարմնավորում է սահմանադրության ոգին**¹¹: Հետևաբար, ՀՀ նախագահի ֆորմալ լիազորությունների սահմանափակ շրջանակը թեև որոշ առումով դժվարացնում է նրա՝ որպես Սահմանադրության երաշխավորի կարգավիճակի ամբողջ ներուժի իրացումը, սակայն չի կարելի պնդել, որ այդպիսով նախագահը մնում է պասիվ դիտորդի դերում: Վերջինս գործուն մասնակցություն կունենա պետականաշինության և սահմանադրական կարգի պաշտպանության գործում՝ ելնելով ոչ միայն պետական իշխանության բարձրագույն մարմինների համակարգում նախագահի ինստիտուտի կարևորությունից և «պահանջվածությունից», որը տեսանելի է նաև այլ պետությունների սահմանադրական փորձն ուսումնասիրելիս, այլև Հայաստանի հասարակության իրավագիտակցության և քաղաքական պրակտիկայի առանձնահատկություններից. նախագահի՝ որպես անձ-ինստիտուտի, բարձր հեղինակությունն ու դրական հանրային ընկալումը Հայաստանում թույլ են տալիս փաստելու, որ այս պետական ինստիտուտը, թեկուզև փոփոխված կարգավիճակով, շարունակելու է նշանակալից ազդեցություն ունենալ հանրային-պետական կյանքում:

¹ Ст'ю Чиркин В.Е., Глава государства, Москва, 2010, стр. 192:
² Ст'ю Й. Изензее, П. Кирхофф, Государственное право Германии, Москва, 1994, էջ 225-230:
³ Ст'ю ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 129-րդ հոդվածի 1-ին մաս, 168-րդ հոդվածի 4-րդ մասը, 131-րդ հոդված, 133-135-րդ, 137-138-րդ, 149-150-րդ հոդվածներ, 166-րդ հոդվածի 1-ին, 3-4րդ, 6-7-րդ մասեր:

⁴ Ст'ю ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի ինքնավարումներ, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/naxagci%20himnavorumner.pdf>, էջ 37:
⁵ Ст'ю նույն տեղում
⁶ Ст'ю ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) 1-3 գլուխները:
⁷ Ст'ю Գերմանիայի հիմնական օրենքի 63-րդ հոդվածը, Իտալիայի Սահմանադրության



Սահմանադրական իրավունք

92-րդ, 94-րդ հոդվածները, Լատվիայի Սահմանադրության 56-րդ, 59-րդ հոդվածները, Հունգարիայի Սահմանադրության «Պետություն» բաժնի 16-րդ հոդվածի 3-6-րդ մասերը, Չեխիայի Սահմանադրության 68-րդ հոդվածի 2-4-րդ մասերը:

⁸ Տե՛ս Գերմանիայի Հիմնական օրենքի 64-րդ հոդվածը, Իտալիայի Սահմանադրության 92-րդ, 94-րդ հոդվածները, Լատվիայի Սահմանադրության 56-րդ, 59-րդ հոդվածները, Հունգարիայի Սահմանադրության «Պետություն» բաժնի 16-րդ հոդվածի 7-րդ մասը, Չեխիայի Սահմանադրության 68-րդ հոդվածի 2-5-րդ մասերը, Հնդկաստանի Սահմա-

նադրության 75-րդ հոդվածի 13-րդ մասերը:
⁹ Տե՛ս Գերմանիայի Հիմնական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասը, Հունաստանի Սահմանադրության 46-րդ հոդվածի 1-ին մասը և այլն:

¹⁰ Տե՛ս Վենետիկի հանձնաժողովի՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ երկրորդ նախնական կարծիքը: Ստրասբուրգ, 2015, http://moj.am/storage/uploads/nakhnakan_karciq1.pdf, էջ 13:

¹¹ Տե՛ս Ի. Иезензее, П. Кирхофф, նշվ. աշխ., էջ 238:

RESUME - РЕЗЮМЕ

RA PRESIDENT AS A GUARANTOR OF THE CONSTITUTION

Martin Manukyan

*Lecturer of the Law Department at Eurasia International University,
PhD Student*

According to the author, in the conditions of the parliamentary form of government, even the powers of the President of the Republic of Armenia can be most significant, especially on issues that involve both legislative and executive authorities, since political competition that has arisen between them and possible conflicts can hinder stability of the constitutional order. Naturally, the participation of the President with the powers in force in solving such problems would be quite productive.

Keywords: *RA Constitution, President, National Assembly, Government, Prime minister, form of government, system, institute, Conception of the RA Constitutional Reforms, Draft Amendments to the Constitution, status, powers.*

ПРЕЗИДЕНТ РА КАК ГАРАНТ КОНСТИТУЦИИ

Мартын Манукян

*Преподаватель юридической кафедры Международного университета
Евразия, соискатель кафедры*

В данной статье обосновывается точка зрения автора, согласно которой в условиях парламентской формы правления даже полномочия Президента Республики Армения могут быть наиболее значимыми, особенно по вопросам, в решении которых участвуют как законодательные, так и исполнительные власти, т.к. политическая конкуренция, возникшая между ними, и возможные коллизии могут препятствовать стабильности конституционного порядка. Естественно, участие Президента с действующими полномочиями в решении подобных задач было бы результативным.

Ключевые слова: *Конституция РА, Президент, Национальное собрание, Правительство, Премьер-министр, форма правления, система, институт, Концепция конституционных реформ РА, Проект поправок в Конституцию РА, статус, полномочия.*

Բանալի բառեր - *ՀՀ Սահմանադրություն, նախագահ, Ազգային ժողով, կառավարություն, վարչապետ խորհրդարանական կառավարման ձև, համակարգ, ինստիտուտ, ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, ՀՀ սահմանադրության փոփոխությունների նախագիծ, կարգավիճակ, լիազորություններ:*

Մ. Մանուկյան - Եվրասիա միջազգային համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, նույն ամբիոնի հայցորդ, էլ. փոստ՝ martin_manukyan1995@mail.ru

Ներկայացվել է խմբագրություն՝ 07.06.2019, տրվել է գրախոսության՝ 14.05.2019, երաշխավորվել է իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան Ռ. Պետրոսյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 17.07.2019